

**ԵՐԿԱՇԽԱՐՀՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԸ Է.Ա.ՅՈՖՄԱՆԻ «ՈՍԿԵ ԾԱՂԿԱՄԱՆԸ»
ՀԵՔԻԱԹՈՒՄ***

Արտակ Դուլյան

Բանալի բառեր՝ ռոմանտիզմ, ազատություն, անհատ, հասարակություն, երկատում, երկաշխարհություն, երկվություն, ներաշխարհ, ֆանտազիա, իրականություն, հեքիաթ:

Երկաշխարհությունը՝ աշխարհի բաժանումն է երկու՝ երազանքների, անուրջների և նյութական աշխարհների միջև: Դա յուրահատուկ է միատիկ գրողներին (մասնավորապես՝ հայազգի հանձարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը), բայց գրականության մեջ իր հաստատուն տեղը գրավեց հատկապես ռոմանտիկ գրողների շնորհիվ, որոնք այս երկու՝ իրական և երևակայական աշխարհների համեմատության ու հակադրության հենքի վրա վարպետորեն զարգացրին ռոմանտիկական գեղարվեստական-պատկերավոր մոդելի սկզբունքը:

Երկու տարբեր աշխարհներում անձի ապրելու հիմնախնդիրը, դեռևս հին ժամանակներից սկսած, քննարկման առարկա է եղել բազմաթիվ գրողների համար, սակայն, ինչպես արդեն նշեցինք, այս ֆենոմենը փիլիսոփայական-գեղագիտական տեսանկյունից ամենայն խորությամբ սկսեց գիտակցվել հենց ռոմանտիզմի շրջանում [1]: Դա բացատրվում է առաջին հերթին ֆրանսիական հեղափոխությամբ: Հեղափոխության ազդեցությունը զգացվում էր ոչ միայն ֆրանսիայում, այլև նրա սահմաններից դուրս՝ գրեթե ամբողջ քաղաքակիրթ աշխարհում: Նրա ժամանակիցներն ականատեսը դարձան վիթխարի, չլսված փոփոխությունների: Կյանքը բոլորովին այլ ընթացք ստացավ. կործանվում էին թագավորությունները, հզոր արքաներ էին գահընկեց արվում, փակվում էին միաբանությունները, տարբեր երկրներում արթնանում էր ազգային-ազատագրական պայքարի գիտակցությունը: «Իրադարձությունների սրընթաց զարգացումները հասարակության սոցիալական արդարության վերականգնման հույս էին ներշնչում» [2]:

Ֆրանսիական հեղափոխությունից հետո գրականության և արվեստի առջև նոր խնդիր դրվեց. արտացոլել մարդու լինելության հարցը ամբողջությամբ, իր ողջ հմայքով:

Ռոմանտիկների գաղափարախոսությունը ելնում էր աշխարհի այն նոր ընկալումից, որը հատուկ էր հետհեղափոխական սերնդին: Բայց շատ շուտով պարզվեց, որ հեղափոխության հռչակած Ազատություն և Հավասարություն նշանաբանը այդպես էլ մնալու է որպես նշանաբան՝ հեռու իրականությունից և իրականացումից:

Դարաշրջանի աններդաշնակ էությունն արդեն ակնհայտ էր բոլորին. չիրականացած և փլուզված երազանքները բոլորի համար դժգոհության առիթ էին, ու, միաժամանակ, իրականության վերաարժևորման շրջան: Ռոմանտիկների մոտեցումները, սակայն, միատեսակ չէին առ կոտորված երազանքներն ու բարոյալքող դարաշրջանը. մի մասը ձգտում էր դեպի լուսավոր ապագա, մյուսները ափսոսան-

* Հոդվածն ընդունվել է 23.01.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

քով էին հիշում անցյալը, շատերն էլ ելքը տեսնում էին պոետական մտքի մեջ փնտրտուքներում:

Եվ ընդհանրապես, ռոմանտիզմի ամբողջ պատմությունը գաղափարի անվերջանալի փնտրտուք է: Այդ որոնումների հետ է կապված բազմաթիվ ռոմանտիկներին հատուկ հետաքրքրությունն առ անցյալը և նույնիսկ դրա բացարձակացումը: Անցյալի հանդեպ հետաքրքրությամբ է պայմանավորված նաև ժամանակից փախուստի սուր զգացողությունը և մենության ձգտումը: Ռոմանտիկները առաջինն էին, որ պատմությունն ընկալեցին իր ընթացքի մեջ, նրա քաղաքական, սոցիալական և մշակութային միտումների երկխոսության մեջ [3]:

Անհատի բացարձակացումը դարձավ բոլորովին նոր տեսակի հերոսի կերտման սկզբունքը: Անհատն իր օրենքները թեև ինքն էր պարտադրում իրականությանը, սակայն ամենուր հանդիպում էր հակազդեցության: Եվ հենց այս հակասականության մեջ էլ ծնվում է օբյեկտիվի և սուբյեկտիվի բախումը. սեփական օրենքներով ապրող գրողի անսահմանափակ հնարավորություններ ու իրական կյանքում առկա պայմաններ: Այստեղից է սկսվում աշխարհի յուրօրինակ երկատումը իսկապես առկայի՝ իրականի և ռոմանտիկ հերոսի գիտակցության մեջ՝ անուրջների աշխարհում գոյություն ունեցող անիրականի, ֆանտաստիկի միջև: Ռոմանտիկները չէին ճանաչում օբյեկտիվ իրականության պարտադրած պայմանները և պաշտպանվում էին նրանից փախուստով դեպի սեփական երևակայությամբ ստեղծած՝ իրենց ֆանտագիաների աշխարհ, անուրջների թագավորություն, կյանքը պոեզիայում, որտեղ մոռացության էր մատնված իրական աշխարհը:

Ռոմանտիզմի սկզբունքները թեև գրեթե նույնությամբ բնորոշ էին անգլիական, ֆրանսիական, ամերիկյան ռոմանտիկներին, սակայն մասնավորապես գերմանական ռոմանտիկներին հաջողվեց ստեղծել ֆանտաստիկ ժանրի մի նոր, մի առանձնահատուկ ձև, որը սերտորեն միահյուսված էր խորհրդավորի, գաղտնիքի, անբացատրելիի պոետիկայի հետ: Հենց հեքիաթն էր, որ նրանց ընծեռեց գեղարվեստական ոչ սովորական տարածքի ստեղծման բացառիկ հնարավորություն, ինչի հնարքների միջոցով գերմանական ռոմանտիկները «մտնում» էին ժամանակակից առօրյա աշխարհի խորքերը՝ աղավաղելով այն ընդհուպ մինչև գրոտեսկի աստիճանի: Գերմանական ռոմանտիզմում հեքիաթը վերածվեց լիիրավ գեղագիտական աստիճանի: «Հեքիաթը ծագեց որպես ֆանտագիայի ծնունդ, որպես ոգիների խաղ՝ հավակնելով լինելության էության խորությամբ ըմբռնմանը և կյանքի խայտաբղետ ու հրաշալի երևույթների յուրովի ընկալմանը» [4]: Հեքիաթի օգնությանը դիմեցին գրեթե բոլոր գերմանական ռոմանտիկները, բայց էմեստ Ամադեուս Հոֆմանի ստեղծագործության համար հեքիաթը ունեցավ բոլորովին այլ նշանակություն:

Ի դեպ, Հոֆմանը ստեղծագործել է ոչ միայն գրականության ասպարեզում, այլև իր տաղանդը դրսևորել է նաև նկարչության մեջ, երգարվեստում: Նա հեղինակավոր երգահան է, թատերական դեկորատոր, բեմադրիչ: Հոֆմանը ռոմանտիկական երաժշտական գեղագիտության հիմնադիրներից է: Հեղինակել է Գերմանիայի առաջին ռոմանտիկական «Ունդինա» (1813) օպերան, սիմֆոնիաներ, «Ալլորորա» օպերան, խմբերգեր, կամերային երկեր, երաժշտագիտական հոդվածներ: Նրա շատ երկերի հիման վրա ստեղծվել են երաժշտական ստեղծագործություններ (Դելիբի «Կոպելիա» և Չայկովսկու «Շելկունչիկ» բալետը), ազդեցությունն են կրել Վեբերը, Շումանը, Վագները, բանաստեղծական կերպարները մարմնավոր-

վել են Շամանի («Կրայսլերիանա»), Վազների («Թռչող հողանդացին»), Ադանի («Ժիգել»), Դելիբի («Կոպելիա») և այլոց երկերում: Նա ժակ Օֆենբախի «Հոֆմանի հեքիաթները» (1881) և Լաչչետիի «Հոֆման» (1912) օպերաների հերոսն է: Վարչավայում, որտեղ ծառայել է որպես պալատական խորհրդատու (1804-1807), կազմակերպել է ֆիլիարմոնիկ ընկերություն, սիմֆոնիկ նվագախումբ: 1807-1813-ին որպես դիրիժոր, կոմպոզիտոր և բեմանկարիչ աշխատել է Բեռլինի, Բամբերգի, Լայպցիգի և Դրեզդենի թատրոններում [5]:

Այնուամենայնիվ Հոֆմանն առաջին հերթին հայտնի է իբրև ռոմանտիկ գրող, նորարար, որպես ուշ շրջանի ռոմանտիզմի դպրոցի հայրերից, մեկն այն բացառիկներից, ում ստեղծագործությունը բուռն հետաքրքրությունների առարկա պետք է դառնար արդեն իր իսկ կենդանության օրոք: Դա չի նշանակում, որ, գրականություն թարմություն և հետաքրքրություն բերելով նա համընդհանուր հեղինակություն էր վայելում: Մեծ մտածողը իր գրական առաջին փորձերից որդեգրել էր իրականության ծաղկման սկզբունքը, մարդկային անարդար բարքերի ու կեղծիքի քննադատությունը, իսկ «նմաններին» հասարակությունը չի հանդուժում: Եվ դա է պատճառը, որ կարճ ժամկետում ձևավորվեց քննադատների երկու ճամբար. ընդդիմախոսներ և համակիրներ: Ընդդիմախոսներն սկսեցին ոչ միայն քննադատել նրա ստեղծագործությունը, այլև ավելի հեռուն գնացին՝ համարելով նրան հարբեցող, հիվանդ երևակայությամբ տառապող, շիզոֆրենիկ և այլն: Նրանցից շատերը նույնիսկ կոչ էին անում չկարդալ Հոֆման ընդհանրապես, որովհետև իբր նրա ստեղծագործությունները իսկական գրականության հետ աղերսներ չունեն, այլ հիվանդագին երևակայության արդյունք են [6]:

Պատճառը Հոֆմանի բերած անսովոր, գրականության մեջ ընդհանուր-միադեմ գաղափարներից տարբերվող նոր սկզբունքներին էին, որոնք մեկ բառով կոչվում են, երկաշխարհություն. երևույթ, որով պետք է ներծծված լիներ ոչ միայն իր ստեղծագործությունը ընդհանրապես, այլև հիմք դառնար մի իսկական դպրոցի ստեղծման, հետևորդների մի մեծ բանակի ձևավորման՝ համակելով նրանց ստեղծագործությունն ամբողջությամբ:

Հոֆմանի բոլոր գործերը՝ «Ասպետ Գլյակը» (1809), «Ցոհան Կրայսլերի, խմբավարի երաժշտական տառապանքները» (1810), «Դոն ժուան» (1813) նովելները, «Ոսկե ծաղկաման» (1814) հեքիաթը, «Սատանայի էլիքսիրը» (1815-1816) վեպը, «Թատրոնի մի դիրեկտորի զարմանալի տառապանքները» (1819), «Գիշերային պատմվածքներ» (1817), «Սերապիոն եղբայրներ» (1819-1821), «Լվերի տիրակալը» (1822), ստեղծված են երկաշխարհության հենքի վրա. երկվությունը նրա հերոսների բնավորության գլխավոր գիծն է, տարբերանշանը:

Սակայն երկաշխարհության ֆենոմենն իր կատարյալ արտահայտությունը գտավ «Ոսկե ծաղկամանը» հեքիաթում [7]:

Ի դեպ, այս հեքիաթը Հոֆմանը գրեց 1813-1814 թթ. այսինքն՝ երբ իր հարազատ քաղաքի՝ Դրեզդենի արվարձաններում պատերազմ էր, իսկ ինքը սոված, առանց փողի, պայթող արկերի սահմեկեցուցիչ աղմուկի ներքո գրում էր ստեղծագործություն, որը հետագայում պետք է դառնար մի առանձին ուղղություն՝ նախանշելով գրականության մեջ երկաշխարհության ֆենոմենի հաստատումը բոլորովին նոր տեսանկյունից. «Այդ մռայլ, ճակատագրական օրերին, երբ օր օրի քարշ ես

տալիս քո գոյությունը և դրանով էլ բավարարվելով, ինձ ձգում էր գրելը ավելի քան երբևէ՝ կարծես իմ առջև լայնորեն բացվել էին հրաշալի թագավորության դռները. այն, ինչ դուրս էր հորդում իմ հոգուց, ձեռք բերելով ձև, հեռանալով ինձ-նից դեպի բառերի հեղեղը» [8]:

Հեքիաթն սկսվում է մի հետաքրքիր մուտքով, որն անչափ իրական է թվում:

Համբարձման տոնի օրը՝ կեսօրին, Ղրեզդենի Սև դարպասն է անցնում ուսանող Անսելմը: Հանկար անգգուշորեն շուռ է տալիս մի այլանդակ պառավի խնձորներով ու կարկանդակներով լեցուն կողովը: Պառավը անիծում է Անսելմին՝ գուշակելով, որ երիտասարդը կհայտնվի ապակու տակ: Այստեղից սկսվում է նրա ողիսականը՝ առաջին հայացքից ողբերգություն թվացող, բայց իրականում՝ ճանապարհի դեպի երանություն: Նա դեռ չի գիտակցում, որ, կողովը շրջելով, նա խախտել է երկու տարբեր աշխարհների հավասարակշռությունը:

Հետագայում պարզվում է, որ պառավը սովորական մահկանացու չէ, այլ նրա թիկունքում գործում են վիշապները, որոնք, ինչպես իրավացիորեն նկատել է գրականագետ Հ.Սարիբեկյանը, ալքիմիական տրակտատներում խորհրդանշում են հողը: Նա Վերոնիկայի հովանավորն է, իսկ Անսելմի թիկունքին արխիվավարն է, որն իրականում մեծ սալամանդրն է, իսկ սալամանդրները ալքիմիական տրակտատներում խորհրդանշել են կրակը: [8]

Եվ ահա այս երկու ուժերի պայքարի արանքում են հայտնվում Անսելմը և Վերոնիկան:

Անսելմը հեռանում է՝ բողոքելով ինքն իր դառը ճակատագրից: Նրա մենախոսությունն ընդհատում է ծառից եկող ուժեղ շրշյունը: Նա տեսնում է երեք ոսկեկանաչավուն օձերի, որոնցից մեկը կապույտ աչքերով նայում է Անսելմին: Հանկարծ օձերը նետվում են էլբա գետը և չքվում են:

Անսելմը փաթաթվում է ծառին՝ իր տարօրինակ տեսքով ու վարքով վախեցնելով այգում զբոսնողներին:

Անսելմը թեև աղքատ է, ծախսողակ (նունիսկ բուտերբրոտը նրա ձեռքից միշտ ընկնում է գետնին, նրա բախտը չի բերում աղջիկների հարցում, որոնց մոտ հաճախ փորձում է տպավորություն ստեղծել, և ընդհանրապես նա ծախողակ է նույնիսկ մանրուքներում), սակայն ինքն իրեն դժբախտ չի համարում, ընդհակառակը. երջանիկ է, որովհետև գտել է բանաստեղծության աշխարհ տանող ճանապարհը. Անսելմը «իսկական երաժիշտ» է. նրան լսելի է բյուրեղյա զանգակների երաժշտությունը, որոնք զնգում են քամուց մեղմ օրորվող թփերում, իր երանելի աշխարհում է նա տեսնում ոսկեկանաչ օձ Սերպենտինային և սիրահարվում նրան և այլն:

Նույն օրը Անսելմը հանդիպում է իր ընկերներին՝ Զեֆիստրատոր Հեբերանդ-տին և Կոնռեկտոր Պաուլմանին, որին ուղեկցում են դուստրերը: Կոնռեկտորը հրավիրում է Անսելմին զբոսնելու նավակով: Զրի մեջ Անսելմը քիչ է մնում շուռ տա նավակը՝ խոսելով տարօրինակ օձերի մասին: Բոլորը կարծում են, որ երիտասարդը մի փոքր ցնդել է և որ պատճառը նրա աղքատությունն է: Հեբերանդ-տի խորհրդով առավոտյան Անսելմն ուղևորվում է Լինդհորսթի մոտ: Ուզում է բարձրացնել դուռը թակելու մուրձը, երբ հանկարծ բրոնզե դեմքը ծռվում է, և վերափոխվում է պառավի դեմքի, այն, որին Անսելմը բախվել էր Սև դարպասի մոտ: Մուրձը հարվածելիս լսում է չարաբաստիկ բառերը, որ իրեն վիճակված է հայտն-

վել ապակու տակ: Զանգի թելը վերածվում է մեծ օձի և փաթաթվում է Անսելմին: Օձը շիկացած երկաթից իր լեզուն դնում է Անսելմի կրծքին, և նա կորցնում է գիտակցությունը:

Հաջորդ օրը արխիվավարը պատմում է տարօրինակ մի պատմություն նախաստեղծ հոփտում ծնված վառվող շուշանի և նրան համբուրած պատանի Ֆոսֆորի մասին: Վերջինս բոցավառվել էր և նրանից դուրս էր եկել նոր էակ և թռել-հեռացել՝ հոգ չտանելով սիրահարված պատանու մասին: Ֆոսֆորը լաց էր եղել իր կորուսյալ ընկերուհու համար: Հետո ժայռից դուրս էր թռել սև վիշապը, որսացել այդ էակին, փաթաթվել նրան իր թևերով, և այդ էակը վերածվել էր շուշանի: Սակայն նրա սերը Ֆոսֆորի հանդեպ դարձել էր սուր ցավ, որից ամեն բան շուրջը դալկացել էր: Ֆոսֆորը մենամարտել էր վիշապի հետ և ազատել շուշանին, որը դարձել էր հովտի թագուհի:

Հիրավի, Հոֆմանին միշտ հարազատ են եղել կախարդական և փիլիսոփայական տրակտատները և նրան հայտնի էր հոգու ալքիմիան: Այս պատումը ևս ալքիմիական տրակտատի գեղարվեստական մատուցում է: Ֆոսֆորի և Սալամանդրի մասին արխիվավարի պատմությունն ամբողջությամբ ներծծված է Արևելքի շնչով, ինչն անչափ հոգեհարազատ էր հեղինակին: Երիտասարդ Ֆոսֆորի մասին պատումը, ըստ ամենայնի, աշխարհի արարման և մարդկային հոգու կերպարանափոխության պատմությունն է, որտեղ շուշանը բոլոր կենդանի էությունների ներդաշնակության երազանքն է, կյանքի ներդաշնակության ընկալումը: Չէ որ ի սկզբանե մարդկային հոգին ապրում էր երանության մեջ, անհոգ, խաղաղ, մինչև մի օր որոշեց հասկանալ աշխարհաստեղծման սկզբունքը, որպեսզի արդեն գիտակցաբար վերադառնա ներդաշնակության իր երազանքին:

«Ես ծագում եմ հենց այդ հովտից և իմ նախա-նախա-տատիկը հենց այդ վառվող շուշանն էր, այնպես որ ես արքայազն եմ», - ավարտում է պատմությունը արխիվավարը: Նրա այս խոսքերը ցնցում են Անսելմին: Այդուհետ նա ամեն երեկո գնում է այն ծառի մոտ, որտեղ տեսել էր օձին, փաթաթվում է ծառին՝ անընդհատ կրկնելով. «Ես կմեռնեմ, եթե դու չվերադառնաս»:

Հերոսի երկաշխարհությունը՝ երկու աշխարհներում ապրելը, ըստ ամենայնի, հետևանք է նրա հոգու երկատվածության. նա կանգնած է երկրնտրանքի առջև՝ Վերոնիկա՞, թե՞ Սերպենտինա, որ նույնն է՝ կյանք, ինչպես կա՞, թե՞ կյանքը պոեզիայում: Բնականաբար, Անսելմը ընտրում է կյանքը պոեզիայում. չէ՞ որ բանաստեղծության աշխարհը միակ վայրն է, ուր կարող է ապաստանել ինքը, պատսպարվել իրական աշխարհի ձղձիմ բարքերից: Իսկ Դրեզդեն քաղաքը, հիշատակվող մյուս վայրերը, և ընդհանրապես, «աշխարհագրական մանրամասները գրողի համար ոչ այլ ինչ են, քան ֆանտազիան կենդանացնելու, արտաժամանակային կոնֆլիկտին որոշակիություն հաղորդելու, նրան ձանաչված ձևեր հագցնելու միջոց»[9]: Նույնիսկ ժամանակն այս հեքիաթում երկատված է [10]:

Ընթերցողը Անսելմի հետ ականա հայտնվում է մի այլ աշխարհում՝ կախարդական, հեքիաթային, որը, պարզվում է, միշտ գոյություն է ունեցել, եղել է մեզանից անկախ, մեր՝ նյութական աշխարհի կողքին, մինչդեռ նրա մասին ոչինչ չգիտեինք: Հենց այս երկաշխարհության մեջ է Հոֆման - փիլիսոփայական փորձում բացահայտել Մարդուն:

Նա պատկերում է աշխարհներից յուրաքանչյուրն իր ամբողջության մեջ, որոնք ոչ միայն կապված են միմյանց, այլև իրար դեմուդեն կազմած են իբրև թշնամիներ. նյութի աշխարհը, որը հիմնված է ստի, կեղծիքի, շահի վրա, և երևակայական աշխարհը, որտեղ թագավորում է երջանկությունը:

Արխիվավարը հաղորդում է Անսելմին, որ օծերը իր դուստրերն են և որ Անսելմը սիրահարված է կրտսերին՝ Սերպենտինային: Իր տուն է հրավիրում ուսանողին և կախարդական հեղուկ է տալիս պառավից պաշտպանվելու համար: Հետո վերածվում է ցինի և թռչում-հեռանում է: Պաուլմանի դուստր Վերոնիկան լսելով, որ Անսելմը կարող է դառնալ պալատական խորհրդական, երագում է դառնալ նրա կինը: Երագանքների ամենաբուռն պահին լսում է սոսկալի մի ձայն, որ ասում է, որ Անսելմը երբեք չի լինի նրա ամուսինը: Վերոնիկան, դիմում է վիուկի օգնությանը, որը խորհուրդ է տալիս թողնել Անսելմին, քանի որ Անսելմը վատ մարդ է և կապվել է իր վաղեմի թշնամի ծերուկի հետ, սիրահարվել է նրա դստերը՝ կանաչ օձին և երբեք չի դառնա պալատական խորհրդական: Գուշակուհու բառերից դժգոհ Վերոնիկան ուզում է հեռանալ, սակայն գուշակուհին Վերոնիկային կանգնեցնելու համար խոստանում է, որ կբռնի Անսելմին ծեր կախարդի հմայանքից, սակայն դրա համար աղջիկը պիտի իր մոտ գա գիշերով: Հույսը նորից ծնվում է Վերոնիկայի սրտում:

Աշխատանքի ժամանակ արխիվավարը Անսելմին է տալիս թանաքի փոխարեն ինչ-որ սև հեղուկ, գունավոր փետուրներ, սպիտակ թուղթ և պատվիրում է արտագրել ինչ-որ արաբական ձեռագիր: Պատանուն աշխատելիս թվում է, որ նրան օգնում է Սերպենտինան:

Գիշերով գուշակուհին բերում է Վերոնիկային դաշտ: Կրակ է անում և տարօրինակ մարմիններ է նետում կաթսայի մեջ, ինչպես նաև Վերոնիկայի մազափունջը և մատանին: Կաթսայից դուրս է գալիս Անսելմը և մեկնում է Վերոնիկային իր ձեռքը: Գուշակուհին կաթսայից հալած մետաղ է ուզում լցնել տիպարի մեջ, երբ հանկարծ վերևից լսվում է ահեղ ձայն, որը հրամայում է նրան չքվել: Պառավն ընկնում է գետնին, իսկ Վերոնիկան կորցնում է գիտակցությունը: Ուշքի գալով՝ նա իր թիկնոցի գրպանում գտնում է արծաթե հայելի, որը գիշերը մետաղից ծուլել էր պառավը: Հայելու միջից նրան էր նայում իր սիրեցյալը:

Տեղին է նշել, որ հայելու մոտիվին դիմելը ինքնանպատակ չէ. դրա միջոցով Հոֆմանը ավելի արդյունավետ է իրացնում երկաշխարհության ֆենոմենը: Հեքիաթում մեկ անգամ չէ, որ հանդիպում ենք հայելիների՝ պառավի մետաղյա հայելին, արխիվավարի բյուրեղապակյա հայելին, Վերոնիկայի կախարդական հայելին և այլն: Ալքիմիական տրակտատներում ևս հայելին բացառիկ գործիք է, որի միջոցով կարելի է տեսնել մյուս աշխարհները և մուտք գործել այնտեղ:

Իսկ արխիվավարի այգիները այստեղ խորհրդանշում են դրախտի հրաշքների նախադուռը: Դրանք միաժամանակ Անսելմի անցնելիք ուղու յուրատեսակ ցուցասարքն են. քանի դեռ նրա հոգին ճիշտ ճանապարհի վրա է, դրանք բաց են, և նա կարող է տեսնել ու լսել հրաշքների աշխարհի արծազանքները: Բայց հերիք է մի փոքր սայթաքի ճշմարիտ ուղուց՝ տեղի տալով պառավ վիուկի հմայանքներին, նա զրկվում է երանելին տեսնելու հնարավորությունից:

Անսելմն արդեն երկար ժամանակ աշխատում է արխիվավարի մոտ՝ անվերջ իր կողքին զգալով Սերպենտինայի ներկայությունը: Սերպենտինան մի օր իսկա-

պես հայտնվում է և ասում, որ իր հայրը սալամանդրների ցեղից է: Պարզվում է՝ նա սիրել է կանաչ օձին՝ շուշանի դստերը, որն աճում էր ոգիների իշխան Ֆոսֆորի այգում: Սալամանդրը գրկում է օձին, որը վերածվում է մոխրի, որից ծնվում է թևավոր էակ և հեռանում է: Սալամանդրը հուսահատ վազում է այգում՝ չորացնելով այն: Ատլանտիդա երկրի իշխան Ֆոսֆորը մարում է Սալամանդրի հուրը, բայց կախարդական ընծա է թողնում նրան: Սալամանդրը կազատվի իր լծից, երբ կգտնվեն պատանհներ, ովքեր կլսեն նրա դստրերի երգը և կսիրեն նրանց: Նշանադրության ժամանակ ծաղկամանից կաճի հրեղեն շուշան, պատանին կհասկանա դրա լեզուն և կապրի իր կնոջ հետ Ատլանտիդում: Այնտեղ կվերադառնա նաև ներում ստացած Սալամանդրը:

Պառավ վիուկը ծգտում է տիրելու կախարդական ծաղկամանին: Սերպենտինան զգուշացնում է Անսելմին հեռու մնալ պառավից, սակայն Անսելմը մտածում է նաև Վերոնիկայի մասին, տեսնում է նրան երազում: Արխիվավարի տուն գնալու փոխարեն՝ գնում է Պաուլմանի տուն: Այնտեղ տեսնում է կախարդական հայելին, որի մեջ դիտում է իրեն և Վերոնիկային: Վերոնիկային համբուրելուց հետո լքվում է վստահությամբ, համոզված, որ միշտ մտածել է միայն Վերոնիկայի մասին և խոստանում է աղջկան ամուսնանալ նրա հետ:

Ճաշից հետո գալիս է ռեգիստրատոր Հեբերանդտը և պատրաստում է պունշ: Մի կում անելուց հետո Անսելմը նորից հիշում է վերջին շաբաթների ողջ անցուդարձը: Սկսում է բարձր զառանցել Սերպենտինայի մասին: Հեբերանդտը և Պաուլմանը սկսում են բղավել. «Կեցցե՝ Սալամանդրը: Թող կորչի պառավը»: Անսելմը փախչում է այդտեղից, իսկ հաջորդ օրը աշխատանքի ժամանակ նրան երևում են ոչ թե տառեր, այլ անվերծանելի նշաններ: Թանաք է կայծու թղթին, ուրիշ դուրս է թռչում կայծակը, մառախուղի մեջ հայտնվում է արխիվավարը և փակում է Անսելմին բյուրեղյա անոթի մեջ: Նա իր կողքին տեսնում է ևս երեք անոթներ, որոնց մեջ նաև փակված էին մեկական ուսանողներ: Սակայն ի տարբերություն իրեն, նրան ուրախ են անոթում ապրելու համար:

Ապակին ալքիմիական տրակտատներում մատուցվում է իբրև մարդու կատարելագործման միջոց, որի շնորհիվ մարդը կարող է հասնել կատարելության, մինչդեռ այստեղ Հոֆմանը այն բերում է արտաքին աշխարհից որպես մարդու մեկուսացման գործիք: Ըստ Ա. Բոտնիկովայի՝ ապակու տակ փակված ապրելը անտանելի ծանր է Անսելմի համար, այն դեպքում, երբ հարևան կոլբաներում նույն պահին գտնվող երեք ուսանողները բոլորովին դժգոհ չեն անոթային կյանքից: «Ապակե կոլբան, որի մեջ փակված է Անսելմը, խորհրդանշում է մարդու մեկուսացման կերպափոխությունը արտաքին աշխարհից. այն, ինչն ուրիշներին հոգիների համար նորմալ է և նույնիսկ երջանիկ, Անսելմի պոետիկ հոգուն անտանելի է [11]:

Անսելմն սկսում է երազել Սերպենտինայի մասին: Հանկարծ դիմացի թեյնիկի մեջ ճանաչում է պառավ վիուկին, որը խոստանում է Անսելմին ազատել, եթե նա ամուսնանա Վերոնիկայի հետ: Անսելմը հրաժարվում է: Այնժամ պառավը փորձում է վերցնել ոսկե ծաղկամանը և փախչել, բայց նրան խանգարում է արխիվավարը: Սալամանդրը հաղթում է, և պառավը վերածվում է բազուկի: Հայտնվում է Սերպենտինան և ասում, որ Անսելմը ներված է: Ապակին պայթում է և նա հայտնվում է սիրելիի գրկում:

Հեղինակը արխիվավարից ստանում է նամակ, որով վերջինս թույլ է տալիս

հրապարակել Անսելմի հետ պատահածը: Ուսանողը նշանվում է Սերպենտինայի հետ, շնչում է ոսկե ծաղկամանի մեջ աճած հրաշալի շուշանի բույրը և հավերժական երանություն է գտնում Ատլանտիդում:

Ինչպես իրավացիորեն նկատել է գերմանական ռոմանտիզմի հմուտ գիտակ Ա.Բոտնիկովան. «Այստեղ Ատլանտիդան երևակայության պտուղն է, հրաշալի, բայց անհասանելի մի երազանք: Ռոմանտիկական իրոնիան հանում է «գեղագիտական խաբուսիկության թագավորության» դիմակը: Այդ թագավորությունը «իր աշխարհից չէ» [12]:

«Դու ապացուցեցիր քո հավատարմությունը, եղիր ազատ և երջանիկ»,-իր հերոսին մաղթում է Հոֆմանը, որը որպես ուղերձ է հնչում` ուղղված համայն մարդկությանը: Ցանկանում ես հավատալ, որ Անսելմը ազատ ու երջանիկ կլինի նաև հետագայում, նրա ոգին չի թուլանա կեղծիքի ու ստորության վրա կառուցված նյութական աշխարհի բարքերի դեմ տարվող մշտական պայքարում, որ Սերը և Հավատը անվերջ կթևածեն` իբրև խորհրդանիշ Բարու հաղթանակի, որ վերջապես հոֆմանյան պատգամը կօգնի շատերին ինքնամաքրվելու, կատարելագործվելու, դառնալու յուրօրինակ Անսելմներ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Дмитриев А.С., Немецкая литература. Романтизм, М. 1991, стр. 8
2. Ботникова А.Б. Немецкий романтизм - диалог художественных форм, Ворон., 2003, стр. 3
3. Д.Чавчанидзе. Романтический мир Эрнста Теодора Амадея Гофмана, М. 2002, стр. 15
4. Ботникова А.Б. указ. работа, стр. 14
5. <https://hy.wikipedia.org/wiki>
6. Гофман Э.Т.А. Жизнь и творчество. Письма, высказывания, документы, М., 1987, стр. 47
7. Гофман Э. Т. А. Собр. соч. В 6 т. М., 1997.
8. <http://boon.am/ernst-theodor-amadeus-hoffmann/>:
9. Ботникова А.Б. указ. работа
10. Федорова Ф.П. Время и вечность в сказках и капричио Гофмана, М., 1982, стр. 22
11. Ботникова А.Б. Функция фантастики в произведениях немецких романтиков, // Проблемы художественного метода. Рига, 1970, стр. 112
12. Ботникова А.Б. Немецкий романтизм - диалог художественных форм, стр. 16.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Երկաշխարհության մոտիվը Է.Ա.Հոֆմանի «Ոսկե ծաղկամանը» հեքիաթում
Արտակ Դուլյան**

Երկաշխարհությունը` աշխարհի բաժանումն է երկու` երազանքների, անուրջների և նյութական աշխարհների միջև: Դա յուրահատուկ է հատկապես ռոմանտիզմի դարաշրջանին, որտեղ այս երկու` իրական և երևակայական աշխարհների համեմատության ու հակադրության հենքի վրա ստեղծվել, կառուցվել է ռոմանտիկական գեղարվեստական- պատկերավոր մոդելի սկզբունքը: Երկաշխարհության մոտիվի վրա է կառուցված գերմանական ուշ շրջանի ռոմանտիզմի հայրերից մեկի` Էռնեստ Ամադեուս

Հոֆմանի ամբողջ ստեղծագործությունը: Հոդվածում քննության ենք առել նրա «Ոսկե ծաղկաման» հեքիաթը, որը միայն առաջին հայացքից է հեքիաթի նման. իրականում այն մի հրաշալի ծոն է Մարդու ազատության, ազատության համար մղվող պայքարի փառաբանություն, սիրո և արդարության գովերգում՝ ներծծված անմնացորդ նվիրումով և հավատով առ լուսավոր ապագան:

РЕЗЮМЕ

Мотив двоемирия в сказке Э.А.Гофмана “Золотой горшок”

Артак Гулян

Ключевые слова: романтизм, свобода, индивидуум, общество, раздвоение, двоемирие, двойственность, внутренний мир, фантазия, реальность, сказка

Двоемирие — это разделенность мира на две части — мир мечты и мир материальный. Это было особенно свойственно для романтической эпохи, когда на основе сопоставления и противопоставления реального и воображаемого миров строился принцип романтической художественно-образной модели. На мотиве двоемирия построено произведение одного из ярчайших представителей позднего немецкого романтизма Э.А.Гофмана.

В статье проанализирована его сказка “Золотой горшок”, которая с первого взгляда похожа на сказку. В действительности это чудесная ода про свободу Человека и восхваление борьбы за свободу, воспевание любви и справедливости, безграничной преданности и веры в светлое будущее.

SUMMARY

The Dual Conception of Reality in Hoffman’s *Golden Vase*

Artak Ghulyan

Key words: romanticism, freedom, individual, society, split personality, dual reality, duality, inner world, fantasy, reality, fairy tale.

The dual conception of reality presupposes the division of the universe into the world of dreams and material world. It is was particularly peculiar for the romantic period, where based on comparison and contrast of real and imaginary worlds the principle of romantic imagery model was created. The motive of dual conception is taken as a basis for the work of one of the most vivid representatives of Late German Romanticism – Ernest Amadeus Hoffman.

In this article we took into consideration his “the Golden Vase” tale which seems to be a fairy tale at the first sight. In fact, it’s a wonderful ode to human freedom, glorification of the struggle for freedom, praise of love and justice, endless devotion and faith in bright future.